

գահել նայն իսկ առաջնորդներն ու փոխանորդները, կոնսիստորիաների նախանգամ վարդապետները և այդտեղ խորհրդածութեան և քննութեան նիւթ դարձնել կեանքի այն բոլոր երեւոյթները, որոնք կապ ունին եկեղեցու պայծառութեան և իրենց հովուական պաշտօնի հետ: Քահաճ նայական պաշտօնը գարձել է միայն արտաքին, ծիսական, պէտք է ընդարձակել նորա հոգևոր բովանդակութիւնը: Մի անգամ որ մեր քահանաների մէջ զարթնեց պաշտօնակցութեան և կոչման բարձրութեան զգացումն ու նախանձախնդրութիւնը, ինքնըստինքեան նրանցից մի, հոգևոր, կենդանի զինուորութիւն կկազմուի, որին մեր դժբաղդ եկեղեցին այնքան կարիք ունի: Անհատական գործունէութիւնը, որքան և մեծ լինի, մի ծաղկով գարուն չի գալիս: Պէտք է միայնենք մեր ուժերը, աղբիւրներից վտակներ, վտակներից գետակներ և գետեր կազմելու համար, որպէս զի մեր դարաւոր եկեղեցու պոսքած անդերին կենդանութեան ջուր մատակարարել կարողանանք:

Գ. Վ. Յովսէփեան

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Մայիսի 26-ին Տփլիսից իւր Աթոռը գարձաւ Ն. Սրբութիւնը: Սինոդի և վանական միւս հաստատութիւնների ներկայացուցիչներն ընդ առաջ դնացին երկաթուղու կայարանը և առաջնորդեցին Ն. Սրբութեան վեհարան: Իսկ 27-ին ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ «բարի գալուստ» մաղթելու և օրհնութիւնն ստանալու:

Մայիսի 10-ին Մայր Աթոռ վերադարձաւ մեր միաբանութեան աւագագոյն անդամ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան, որ երկար տարիներից ի վեր կատարում էր երնջակու ս. Կարապետ վանքի վանահայրութիւնը։ Նորա փոխարէն նշանակուած է Տ. Կիւրեղ վարդապետ, որ արդէն մեկնել է իւր պաշտօնատեղին։

Մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում «Օտար եկեղեցիներ»-ի բաժնի վերայ, Այդ տեղ աշխատում ենք զաղափար տալ, որքան ներում են Արարատի սուղ էջերը, թէ ինչ շարժումներ և գործեր են կատարւում օտար եկեղեցիների մէջ, որ մեզ համար էլ կարող են խրատական լինել։ Այս համարում հետաքրքրական է «Փրկութեան բանակի ընկերական գործունէութիւնը Անգլիայում» վերնագրով յօդուածը, Այս շարժման հիմնադիրն էր «գեներալ» Բուլթ, որ հոգեւոր մի զինուորութիւն կազմակերպեց մեղքի, թշուառութեան և անկրօնութեան դէմ մաքառելու համար և կարճ ժամանակի մէջ այնպիսի մի յաջողութիւն ունեցաւ աշխարհի ամեն մասերում, որ ոչ մի նորագոյն շարժում չէ ունեցել։ Գեներալ Բուլթի և նորա գործի մասին գրել է Կարապետ վարդ. 1895 թ. «Արարատի» մէջ։

«Տաճկահայքի» բաժնի մէջ Պոլսոյ թերթերից արտատպում ենք Տ. Մաղաքիա պատրիարքի կոնդակը, որով ժողովրդի բողոքի հիման վերայ՝ լուծում է երկու քահանայի եկեղեցու սպասաւորութիւնից։ Այդ քահանաները այրիանալով՝ թոյլ են տուել իրենց նորից ամուսնանալ փոխադարձաբար իրար պսակելով։

